ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
«ՌՈՍՏՈՄ»
ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

1242Ն12
19.մայիս.2022

Իրանի Իսլամական Հանրապետութիւնում
Հայաստանի Հանրապետութեան Արտակարգ եւ Լիազօր Դեսպան՝
Յարգելի պրն. Արսէն Աւագեան

44-օրեայ պատերազմից յետոյ վտանգւած են Արցախի և Հայաստանի սահմաններն, և սփիւռքը բնականաբար չի կարող անտարբեր լինել Արցախում և Հայաստանում մտահոգիչ զարգացումների վերաբերեալ:

Հայաստանի ներկայ իշխանութիւնները փորձում են թշնամու նկատմամբ զիջողական քաղաքականութիւն վարելով և տարածաշրջանում խաղաղութիւն հաստատելու կեղծ կարգախօսով շեղել հանրային կարծիքը իրական վտանգներից:

Նաև վերջին օրերում արդէն յատելով կարմիր գիծը, բացայայտ յայտարարւում է իշխանութիւնների մտադրութիւնները Արցախը ադրբեջանին յանձնելու և թուրք ադրբեջանական տանդեմի ամբողջական պահանջները բաւարարելու մասին:

Վերոնշեալ իրադարձութիւններից ելնելով, վերջին օրերի ընթացքում Հայաստանում տեղի են ունենում ժողովրդական մեծաթիւ ցոյցեր և անհնազանդութեան գործողութիւններ և օր ըստ օրէ ակնյայտօրէն խտանում է պայքարի մասնակիցների շարքերը: Այս պայքարին իրենց վճռորոշ մասնակցութիւնը ունեն նաև երիտասարդները, որոնք գիտակցելով առկայ ներքին և արտաքին սպառնալիքները, միանում են պայքարին:

Ցոյցերի ընթացքում ոստիկանութիւնը ցուցադրում է բիրտ, անհամաչափ և նոյնիսկ անմարդկային վերաբերմունք՝ խաղաղ ցուցարարների նկատմամբ, որոնք իրագործում են ՀՀ սահմանադրութեամբ՝ իրենց տրւած արտայայտութեան իրաւունքը:

Թեհրանի Ռոստոմ երիտասարդական միութիւնը իր անվերապահ և ամբողջական զօրակցութիւնն է յայտնում՝ ցուցարարներին ու միանում է նրանց արդար պայքարին և պահանջներին՝ կոչ անելով ոստիկանութեանը պահանջում է անյապաղ դադարեցնել անօրինական գործողութիւնները սեփական ժողովրդի դէմ:

Յարգանօք՝

«Ռոստոմ» Երիտասարդական Միութիւն